Քսան տարի անց

Հատուկ գնդի բացառիկ դերը՝ ընդդեմ ներքին եւ արտաքին սպառնալիքների

Հեխխորհրդային ժամանակաշրջանում մեր կարեւորագույն ձեռքբերումներից մեկն իր մարտական պատրաստվածությամբ տարածաշրջանում այսօր արդեն լավագույնը գնահատվող ազգային մարտունակ բանակի ստեղծումն է:

Բանակաշինությունն սկսվեց մեր երկրի ու ժողովրդի համար ամենածանր ժամանակահատվածում՝ պարտադրված պատերազմ, տնտեսական շրջափակում...

Հայկական զինված ուժերը սիրված էին կազմավորման շրջանում բազմապիսի հիմնախնդիրներ հաղթահարել, խանգի այն, ինչ մնացել (կամ փոխանցվել) էր խորհրդային բանակից, չափազանց փոքր էր բանակային տնտեսություն համարելու համար: Սկսած համազգեստից, վերջացրած զորանոցային տարական պայմաններով՝ ամեն ինչ սկսվեց զրոյից: Այդ թվում՝ եւ զորակոչային ռեսուրսների ճգտումն ու նպատակային օգտագործումը: Մանավանդ որ՝ 1990թ. մայիսի 3-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը, մի շարք հանգամանքներից ելնելով, սրիպված եղավ ընդունել որոշում՝ «Հայկական ԽՍՀ-ում գարնանային զորակոչը ժամանակավորապես դադարեցնելու մասին», որի համաձայն՝ ժամանակավորապես դադարեցվել էր հանրապետության սահմաններից դուրս հայազգի զինակոչիկների ծառայության համար գարնանային զորակոչ անցկացնելու մասին ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1990 թվականի մարտի 29-ի որոշման գործողությունը...

Սրան զուգահեռ, ԽՍՀՄ ԶՈՒ-ից հարկադրաբար հեռացած այդ տղաների զգալի մասը վերադարձավ հայրենիք եւ համալրեց սահմանամերձ բնակավայրերի պաշտպանությանը զինվորագրված կամավորական ջոկատների շարքերը: Պետությունը պետք է միջամտեր նրանց իրավական կարգավիճակի հստակեցմանը եւ միջամտեց. 1990թ. մայիսի 3-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունեց N 1833-XI որոշումը, որով ԽՍՀՄ ԶՈՒ զորամասերը հարկադրաբար լքած հայ երիտասարդներին թույլատրվեց հետագա ծառայության անցնել Հայկական ԽՍՀ տարածքում գտնվող զորամասերում...

Այս իրադարձությունների շուրջ երեք ամիս անց, մի շարք հանգամանքներով պայմանավորված, կամավորականներին միավորելու, երկրի սահմանները հետագա անվտանգությունն ապահովելու եւ ամրապնդելու խնդիր դրվեց. Ադրբեջանին հարակից բոլոր սահմանագոտիներում հակառակորդի լայնամասշտաբ ռազմական գործողություններին դիմագրավելու նպատակով կանոնավոր բանակ ստեղծելու անհրաժեշտությունը պարզապես անխուսափելի էր...

Կանխազգալով երկրի անվտանգությանն սպառնացող այդ վտանգները, ելնելով երկրի ներքաղաքական վիճակից, Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը 1990թ. սեպտեմբերի 13-ին որոշում ընդունեց ստեղծել կանոնավոր զորամիավորում, դրանում միավորելով կամավորական բոլոր ջոկատներին ու ազատամարտիկներին: Վազգեն Սարգսյանի նախաձեռնությամբ ստեղծվեց հատուկ գունդը:

Քսան տարի առաջ՝ 1990թ. սեպտեմբերի 20-ին, մեր երկրի համար բախտորոշ այդ ժամանակահատվածում, կազմավորվեց հատուկ գունդը՝ հայկական բանակի առաջին ստորաբաժանումը, որը միաժամանակ երկու խնդիր պետք է լուծեր. երկրի ներքին կայունության ամրապնդում եւ արտաքին սահմանների պաշտպանություն: Ընդ որում՝ խնդիրը միայն նյութական ռեսուրսները չէին եւ ոչ էլ արտաքին սպառնալիքները. 1990թ. սեպտեմբերի 13-ը երկրի ողջ տարածքում ներքաղաքական իրադարձություններով պայմանավորված արտակարգ դրություն մտցնելու 16-րդ օրն էր, լուծարի էր ենթարկվել Հայոց ազգային



Արխիվ

բանակ ռազմական կազմակերպությունը...

1990թ. հոկտեմբերի 5-ին հատուկ գնդում տեղի ունեցավ Անկախության հռչակագրի ընդունումից հետո հայոց ազգային բանակի առաջին ստորաբաժանման երդման առաջին հանդիսավոր արարողությունը: Կարճ ժամանակահատվածում գունդը համալրվեց 29 մարտական եւ 19 պահեստային վաշտերով: Գնդում ընդգրկվեց 2000-ից ավելի զինվոր: Առաջին զենքը գունդը ստացավ 1990թ. սեպտեմբերին:

Կազմավորման առաջին իսկ օրից հատուկ գունդը մեծ ներդրում ունեցավ ինչպես երկրի ներսում կարգ ու կանոնի պահպանման, այնպես էլ երկրի սահմանների պաշտպանության հարցում՝ միաժամանակ դառնալով այն հենքը, որի վրա պիտի կառուցվեր հայոց ազգային բանակը: Պիտի կառուցվեր անձնազոհության, անձնվիրության եւ մարտունակության այն օրինակով, որ դրսեւորեցին հատուկ գնդի մարտիկներն այդ դժվարին տարիներին Իջեւանի, Նոյեմբերյանի, Կրասնոսելսկի, Կաթնաղբյուրի, Արծվաշենի, Շահումյանի, Մարտակերտի, Լաչինի պաշտպանության եւ Ջեբրայիլի, Կուբաթլուի, Քելբաջարի եւ Զանգելանի ազատագրման մարտերում:

1994թ. հունվարից մինչեւ 1997թ. գունդը սանձնեց նաեւ մեզ համար բացառիկ ռազմավարական նշանակություն ունեցող Օմարի լեռնանցքի պաշտպանությունը եւ, փայլուն կատարելով իր մարտական առաջադրանքները, ջախջախեց հակառակորդի՝ թվով իրեն գերակշռող ուժերը՝ նպաստելով Լեռնային Ղարաբաղի տարածքային ամբողջականության եւ Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանությանը: Ավելին՝ կարծում եմ սխալված չենք լինի, եթե ասենք, որ եթե չլինեին ազգային բանակի այս առաջին ստորաբաժանման անձնակազմի (բոլորն էլ արժանի են անվանական հիշատակման) տարած հաղթանակները, մեզ պարտադրված պատերազմը կձգձգվեր անորոշ ժամանակով, եւ վտանգի կենթարկվեր հայոց պետականության կայացումը:

Ցավոք, մեզ պարտադրված պատերազմական գործողություններում հատուկ գունդը մի քանի տասնյակ զոհեր տվեց, գնդի վաշտերի 29 հրամանատարներից 6-ը զոհվեցին, պաշտոնական տվյալներով՝ գնդի տված զոհերի թիվը 159 է:

Հետագայում նրանցից շատերն արժանացան Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական պարգեւների, իսկ Ջիվան Աբրահամյանին հետմահու շնորհվեց Ազգային հերոսի կոչում: Ի դեպ, հատուկ գունդը առաջիններից մեկն էր, որին հանձնվեց մարտական դրոշ: Գնդի մի շարք զինծառայողներ պարգեւատրվել են Արիության եւ Մարտական ծառայության մեդալներով, ծառայողական գործունեության ու մարտական պատրաստության բարձր ցուցանիշների, մարտական սխրանքի եւ բանակաշինության համար նրանցից շատերն արժանացել են տարբեր պարգեւների:

Այսօր էլ հատուկ գնդի մարտիկներից շատերը համալրում են մեր ազգային բանակի շարքերը եւ այսօր էլ նրանք պատրաստ են անհրաժեշտության դեպքում կրկին ոտքի կանգնել՝ ի պաշտպանություն արյան գնով ազատագրված ու պաշտպանված հայրենի հողի ու ժողովրդի եւ ի հոգու պարտք այն տղերքի, ովքեր հանուն հայրենիքի, իրենց կյանքը չխնայելով՝ իրենց սուրբ արյունն են խառնել այս վիրավոր հողին՝ հանուն այս վիրավոր հողի ամենայն պատասխանատվությամբ վերաբերվելով մեր հայրենիքի պաշտպանության գործին:

Շատերին եւ առաջին հերթին մեր հակառակորդներին անհավանական էր թվում, որ միայն մեզ հայտնի դժվարին պայմաններում կազմավորված բանակն ի վիճակի կլիներ շուտ ոտքի կանգնել եւ ամենածանր պայմաններում անգամ մարտական հարուստ փորձ եւ ավանդույթ ունեցող բանակներին հատուկ մարտունակություն դրսեւորել:

Սակայն մեր բանակի մարտունակության մասին շատ ավելին են ասում ինչպես մեր երկրի անառիկ սահմանները, առ այսօր անցկացված տարբեր (այդ թվում՝ համատեղ) զորախաղերը, զորավարժությունները ու խաղաղասիրական առաքելությունները, այնպես էլ օր օրի ավելի ամրապնդվող ու գիտական հիմքերի վրա զարգացող բանակային ողջ տնտեսությունը:

Մատուռ ՄԱՐՅԱՆ